


## Լուրերի Հոսք

### Գերմանիայում ցուցադրվում է ֆիլմ Ստալինի մասին

Քյոլն, 24 փետրվար, ՌԻԱ-«Սնարք»: Գերմանիայի հեռուստատեսության 3-րդ ծրագրով սկսվել է «Ստալին» 4 սերիանոց վավերագրական ֆիլմի ցուցադրումը: Դրա հեղինակն է գերմանացի բեմադրիչ-վավերագրող Հարբմունդ Կամինսկին: Ֆիլմում կան փակ արխիվներից առնված բազմաթիվ հազվագյուտ դրվագներ, որոնք պատմում են Իոսիֆ Ստալինի անձնական կյանքի մասին: Հեռուստադիտողներն առաջին անգամ կարող են ծանոթանալ Կասինի ողբերգության վերաբերյալ Միխայիլ Գորբաչովի նախագահական արխիվի վավերագրերին:

### Թբիլիսի-Մոսկվա երթուղին չի գործում

Մինչեւ փետրվարի 25-ը դադարեցվել էր գնացքների երթեւեկությունը Թբիլիսի-Մոսկվա երթուղով: Վրաստանի երկաթուղային դեպարտամենտի տնօրեն Ռեզո Վակաչիձեն հաղորդեց, որ երթեւեկությունը դադարեցվել էր գնացքների գերբեռնվածության պատճառով: Դա հիմնականում պայմանավորված էր նրանով, որ մարդատար գնացքների մեջ բարձվում էին ցիտրուսներով լի արկղեր եւ այդ պատճառով վագոնների քաշը 20 տոննա նորմայի դեպքում հասնում էր 30-40 տոննայի: **ՆՏ**

### Պյատիգորսկում մոլեգնում է գրիպը

Պյատիգորսկ, 24 փետրվար, «Սնարք»: Մինչեւ մարտի 1-ն ընդհատվել են պարապմունքները Պյատիգորսկի միջնակարգ հանրակրթական դպրոցներում: Պատճառն առողջարանային քաղաքում մոլեգնող գրիպի համաճարակն է, որի հետեւանքով կտրուկ շատացել են հիվանդներն աշակերտների եւ մանկավարժների շրջանում, «Սնարք»-ի թղթակցին հայտնեց քաղժողկրթբաժնի վարիչ Նիկոլայ Բալը:

### Գերմանական մարկի փոխարժեքի կտրուկ աճ

Չորեքշաբթի օրը Մոսկվայում կայացած միջբանկային վալյուտային բորսայի աճուրդում գերմանական մարկի փոխարժեքը կտրուկ աճել է, հասնելով մեկ մարկի դիմաց 418 ռուբլու: Աճուրդին մասնակցում էր 20 առեւտրային բանկ: Նախնական առաջարկը կազմում էր 3 մլն 330 հազար, նախնական պահանջարկը՝ 4 մլն 290 հազար մարկ: Վաճառքի ծավալը հազվեց 2 մլն 200 հազար մարկ: Աճուրդին Ռուսաստանի կենտրոնական բանկը չէր մասնակցում: Անցյալ շաբաթ կայացած նախորդ աճուրդի ժամանակ մարկի փոխարժեքը կազմել էր 340 ռուբլի: **ԻՖ**

### Ռուսիայում արժեզրկումը 1000 տոկոս

Համաձայն ավստրիական հետազոտական կենտրոնների տվյալների, այս տարի Ռուսաստանում արժեզրկումը կհասնի 1000 տոկոսի: Արդյունաբերական եւ համախառն արտադրանքի ծավալը կնվազի 15 տոկոսով: Ըստ այդ տվյալների, անցյալ տարի Ռուսաստանում աշխատավարձի իրական արժեքը նվազել է 60 տոկոսով: **«Ֆէյհան»**

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորման եւ նկարազարդման
հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 20 000. Պատվեր 1457

Ստորագրված է տպագրության 25.2.1993

digitised by A.R.A.R.@